6 մայիսի 2010 թվականի N 615 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի N 321-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ

Մ Ա Ս Ի Ն

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 18-ի «Հայաստանի Հանրապետության 2010/2011 ուսումնական տարվա ասպիրանտուրա ու դոկտորանտուրա ընդունելության տեղերը և առկա ուսուցմամբ ասպիրանտուրա ու դոկտորանտուրա ընդունելության տեղերի բաշխումը հաստատելու մասին» N 321-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 1-ին կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունում «122» թիվը փոխարինել «132» թվով.

2) 3-րդ կետի 2-րդ ենթակետում «կառավարությանը» բառը փոխարինել «կրթության և գիտության նախարարությանը» բառերով.

3) որոշման հավելվածում՝

ա. հանել 53-րդ տողը,

բ. 56-րդ տողին հաջորդող «Ընդամենը» տողում «5» թիվը փոխարինել «4» թվով,

գ. 62-րդ և դրան հաջորդող «Ընդամենը» տողերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

§

62.	«Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա» հիմնադրամ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Ե.13.02	Ավտոմատացման համակարգեր	1	
62.1.			ԺԲ.00.04	Դատավարական իրավունք-դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն	1	
	Ընդամենը				2	

¦,

դ. 63-րդ և դրան հաջորդող «Ընդամենը» տողերում «5» թիվը փոխարինել «15» թվով,

ե. 82-րդ տողում «1» թիվը փոխարինել «2» թվով,

զ. 83-րդ տողում «2» թիվը փոխարինել «3» թվով,

է. 85-րդ տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

§

85.	Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ		ԺԲ. 00.01	Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, իրավական ուսմունքների պատմություն	3	
85.1.			ԺԲ.00.05	Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք	1	

¦,

ը. 86-րդ տողին հաջորդող «Ընդամենը» տողում «25» թիվը փոխարինել «29» թվով,

թ. հանել 87-րդ տողը,

ժ. 88-րդ և 89-րդ տողերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

§

88.	Առողջապահության ազգային ինստիտուտ	ՀՀ առողջապահության նախարարություն	ԺԴ.00.17	Հանրային առողջություն և առողջապահության կազմակերպում	1	
89.			ԺԴ.00.20	Անեսթեզիոլոգիա և վերակենդանացում	1	

¦,

ժա. 89-րդ տողին հաջորդող «Ընդամենը» տողում «3» թիվը փոխարինել «2» թվով,

ժբ. 94-րդ տողում «10» թիվը փոխարինել «7» թվով,

ժգ. վերջին տողի 6-րդ սյունակում «122» թիվը փոխարինել «132» թվով։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2010 թ. մայիսի
Երևան